

Շաթր Զատէ Արիֆի Էֆէնտի . քննութիւն և Իլամ նորա : Հրովարտակ Լատինաց : Կործանումն շինուածոց Համարձման տեղոյն : Խաթթի Հիւմայուն Կիւլշանէի : Գաբրիէ Եղիսկոպոս Եղիպատի : Պարաք Ճէմարանին Իւսկիւտարի : Մահ Գաբրիէ Գաթրարբի : Հրաբուխ Ի Մարխա : Յայտնութիւն Նշխարաց Արբոյ Ի Խարբերդ :

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ քննութեանն, զոր գրեցաք 'ի վերանդր, ամբողջապէս առաքեցաւ յեզրիպտոս առ Փոխարքայն, եւ անտի առ Տէրութիւնն 'ի Կոստանդինուպօլիս : Դուռն Օսմանեան յետ տեսանելոյ զայն, որոշեաց վերըստին առաքել զայլ ոք յերուսաղէմ տեսանել եւ բարեօք իմանալ զհամգտմանն իւրաքանչիւր տեղեաց, յորոց վերայ վիճէին քրիստոնեայք, իսկ Դեսպանն Գաղղիոյ 'ի Թախանձեւոյ Ֆրանչիսկեան կրօնաւորաց, ստիպէր զԴուռն անօրատճառ խնդրելով զկործանումն շինուածոց . գրեցաւ ժեշտապէս ստի առ Դատաւորն Երուսաղէմի . յասպաղել ըզխնդիրն մինչ ցորոշումն խնդրոյն, զորոյ պատճէնն տեսին Հայք : Փոխանորդն Երուսաղէմի Յովհաննէս Եպիսկոպոս, գիտութեամբ գլխաւորաց ազգին՝ պատրաստեաց վերըստին իգիր տղաշանաց մատուցանել 'ի Դուռն, վասն բաժանորդութեան եկեղեցւոյն Բեթղէհէմի, 'ի մէջ բերելով զիմաստոս երկօքին հրովարտական Մահմուտայ Արքային, տուեալ 'ի Թուին 1778, զորոյ մի պատճէնն առաքեալ էր յերուսաղէմ առ Խորհրդականս :

Յետ այնորիկ առաքեցաւ 'ի Դրանէ իբր Ոստիկան Շաթր Զատէ Արիֆի Էֆէնտի, 'ի քննութիւն շինուածոցն Համբարձման եւ այլոց տեղեաց (1838 . Օգոստոս) : Հասեալ նորա յերուսաղէմ չրջեցաւ ինքն անձամբ և 'ի քննութիւն էարկ զշինուածսն, եւ ստորագրեաց զայն աղօթատեղի Իսլամաց (Մէսճիտ), և ըստ այնմ մտաց գրեաց Իլամ եւ ետ ցլատինս յղել 'ի Կոստանդինուպօլիս : Ապա գնաց 'ի Քերբոն յուխտ 'ի գերեզման Հայր Արրահամու, և 'ի ճանապարհին յանդիպեալ 'ի Բեթղէհէմ ետես և զեկեղեցին, ուր ժողովեալ էին Լատինք և Յոյնք և ցուցանէին նմա ըզ-